

**ՀԻՒՍԵՆԻԿԻ ՀԱՅՐԵՆԱԿ Յ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱԶՈՂ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ**

Այս տարի Հիւսենիկի Հայրենակցական Միութիւնը նուիրական, նոր ու բոլոր Հիւսենիկցիներուն ալ հաւատարմացէս սրտերու խօսող գերազոյն պարտականութիւն մը կատարելու հարկին տակ կը գտնուի:

Ատիկա գաղթաշխարհի Հիւսենիկցիներուն ներդադթի Գործին ամէն աջակցութիւն հասցնելն է:

Այսօր Միութեան բոլոր մասնաճիւղերն այս առթիւ բացառիկ եւ անսովոր աշխատանքի յծուած են: Առանձին հրճուանքով պէտք է հոս արձանագրել, որ վերջին բանի մը ամիսներու ընթացքին, կատարուած բոլորանուէր աշխատանքները աննախընթաց յաջողութեամբ առաջ կը տարուին: Ամէն տեղ, առանց բացառութեան, ընդհանուր խանդավառութիւն եւ եռուզեռ կը տիրէ, որու նմանը Հայրենակցականի ութը տարիներու պատմութեան մէջ հազիւ արձանագրուած ըլլայ:

Սփիւռքի մէջ գրկանքներով լեցուն թափառականի կեանք սպրոդ մեր համագիւղացիները Հալէպէն եւ Յունաստանէն առանձին նամակներով կ'իմացցնեն կեղծ Վարչութեան՝ որ միայն Հալէպի մէջ աւելի քան 5A Հիւսենիկցիներ արդէն արձանագրուած ու պատրաստ են մեկնելու Հայաստան: Եթէ անոնց մեկնումի Ժամանակը որոշուի եւ Ամերիկայի Հիւսենիկցիներու նիւթական օգնութիւնը հասնի ատենին, անոնք միացած կ'ըլլան ներդադթողներու կարուանին:

Եղած այս սրտառուչ կոչերուն, փստաւ ենք, ամէն տեղ ապրող Հիւսենիկցիները, առանց կուտակցական եւ յարանուանական խրտութեան, ուրախութեամբ պիտի կատարեն իրենց բաժին պարտականութիւնները:

Այս նպատակաւ, Օգոստոս 18ի կիրակի օրը, Միութեանս Հարթֆրրտի մասնաճիւղը, իր զոհարերող անդամներու նախաձեռնութեամբ, ունեցաւ դաշտահանդէս մը, որուն փութացեր էր ներկայ ըլլալ երկուսն խոշոր բաղձութիւն մը:

Այս ձեռնարկը իր աւելի քան

600 տոլարի հատուցով, եղաւ նիւթապէս եւ բարոյապէս աննախընթաց յաջողութիւն մը:

Իսկ Օգոստոս 25-ի կիրակի օրը, կեղծ Վարչութեան նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ շրջանիս բոլոր մասնաճիւղներու, նոյնպէս Հիւսենիկցիներու ներդադթին ի նպատակ տեղի ունեցաւ իրենց տարեկան ձեռնարկը եղող դաշտահանդէսը՝ Հայաստան Քէմփին մէջ:

Այս աննաման ձեռնարկին մէջ եւս, ոչ միայն ամէն խաւերու պատկանող երկուսն Հիւսենիկցիներն իրենց մօտիկ բարեկամներով, այլ եւ ուրիշ տեղացի հայրենակիցներ փութացեր էին ներկայ ըլլալ: Պարերէն եւ աճուրդէն դոյացաւ 1200 տոլար:

Այս երկու յաջող ձեռնարկներուն մէջ ալ Հիւսենիկի Հայրենակցական Միութեան հիմնադիրներէն մին եղող Պր. Արտաւազդ Ռուսիկեան, կարճ ու յստակ բանախօսութիւններով տուաւ կազմակերպութեան ութը տարիներու ի նպատակ սփիւռքի Հիւսենիկցիներու կատարած աշխատանքներուն համառօտ պատմութիւնը: Երկու ձեռնարկներուն մէջ ալ ան սրտազին կոչ ըրաւ բոլոր վայրերուն մէջ ապրող Հիւսենիկցիներուն, որպէսզի մեր համագիւղացիներու ներդադթի գործին ոյժ տան ու կատարուելիք նոր աշխատանքներուն մէջ չը դյանան առաւելագոյն շահով նիւթական մասնակցութեան իրենց բաժինը բերելու:

Հաւաքական աշխատանքի լրծուելին է օրուան հրամայական պահանջը: Այդ միջոցով միայն հնարաւոր պիտի ըլլայ պէտք եղած նիւթական ոյժը ապահովելու անով հոգալ եղած բոլոր պահանջները՝ վերջնականապէս տեսնելու սփիւռքի բոլոր Հիւսենիկցիներու Հայաստանի մէջ տեղաւորուելը:

Այս պիտի ըլլայ մեր սրտի միակ հանգստութիւնն ու մխիթարութիւնը՝ որպէս վարձատրութիւն կատարուած եւ կատարուելիք աշխատանքներուն:

ՍԱՐ ԴԱՐՈՒՆԻ